Արձանագրություն N 3

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ 31.08.2018թ.
ժ. 12:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Ն. Յարմալոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է տեղեկատվություն, ըստ որի «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ուսումնասիրելով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ճանաչել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

2. ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 01.09.2018թ.–ից մինչև 05.09.2018թ.:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

3. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ծանուցել՝ անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում և

կնքել «Սպիտակ համայնքի կարիքների համար Սպիտակի գեղարվեստի դպրոցի և Սպիտակի երաժշտական դպրոցի շենքերի վերանորոգման աշխատանքների կատարման գնման» N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 պայմանագիր:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան

_____ Ն. Յարմալոյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան